



## iAN TV Box

Օգտագործողի Ուղեցույց

## iAN TV Box հեռուստատեսային սարքի նկարագրություն

iAN TV Box-ը բարձր որակի հեռուստատեսային հեռարձակում ապահովող թվային հաղորդող սարք է, որը ինտերնետ կապի միջոցով հնարավորություն է տալիս աշխարհի ցանկացած երկրում դիտելու բոլոր հայկական և բարձր վարկանիշ ունեցող միջազգային հեռուստաալիքները:

Սարքի միացումն ինտերնետին ապահովվում է **Wi-Fi** կապի միջոցով կամ լարային միացմամբ, իսկ հեռուստացույցին միացումը՝ **HDMI** հանգույցի կամ **CVBS** լարի միջոցով:



Պրոցեսոր՝ Hi3716M

Ֆլեշ հիշողություն՝ 256 ՄԲ

Օպերատիվ հիշողություն՝ 512 ՄԲ

Ընդհանուր քաշ՝ 120 գրամ

Ֆիզիկական չափսեր՝ 105x105x20 մմ






iAN TV Box սարքը համադրելի է ցանկացած մոդելի հեռուստացույցի հետ և ինտերակտիվ հնարավորությունների շնորհիվ հեռուստաալիքների դիտումը դարձնում է առավել հարմար և հաճելի:


iAN TV Box սարքի ամբողջական փաթեթը ներառում է հաղորդող սարք, ունիվերսալ հեռակառավարման վահանակ, HDMI լար, Ethernet լար, CVBS լար և սնուցման բլոկ:

# iAN TV Box սարքի ամբողջական փաթեթ

1. Հաղորդող սարք
2. Ունիվերսալ հեռակառավարման վահանակ
3. CVBS լար
4. Ethernet լար
5. HDMI լար
6. Մուուցման բլրկ



# Միացում և առաջնային կարգավորումներ




Քայլ 1. HDMI կամ CVBS լարի միջոցով սարքը միացնել հեռուստացույցին:

Քայլ 2. Մուուցման բլոկի միջոցով iAN TV Box սարքը միացնել հոսանքի աղբյուրին:

Քայլ 3. Ապահովել ինտերնետ ցանցին միացումը Wi-Fi կապի միջոցով կամ լարային միացմամբ:

Քայլ 4. Հեռուստացույցի հեռակառավարման վահանակի միջոցով հեռուստացույցի մենյուից ընտրել համապատասխան վիդեո-մուտքը, որին միացել է iAN TV Box սարքը:



Քայլ 5. Հաղորդող սարքն առաջին անգամ միացնելու ժամանակ անհրաժեշտ է կարգավորել ինտերնետ ցանցին միացումը, որից հետո կբացվի iAN TV հեռուստատեսային համակարգը:

Քայլ 6. Հեռուստատեսային համակարգ մուտք գործելու և ծառայությունն ակտիվացնելու համար անհրաժեշտ է բացված ինտերֆեյսի համապատասխան դաշտերում մուտքագրել iAN TV ծառայությունից օգտվելու Մուտքանունն ու Գաղտնաբառը:

## Հեռակառավարման վահանակ



1. Անջատել / միացնել iAN TV Box սարքը
2. Այս կոճակները նախատեսված են հեռուստացույցը կառավարելու համար (SET կոճակի միջոցով Դուք կարող եք հեռուստացույցի վահանակի հիմնական կոճակների ֆունկցիաները ձայնագրել iAN TV Box սարքի վահանակի վրա և հեռուստացույցը կառավարել iAN TV Box-ի վահանակի միջոցով)
3. Լրացուցիչ հնարավորություններ / տեղեկատվություն ծառայության մասին
4. Աուդիո / սուբտիտրեր / Էկրանի մասշտաբավորում / ձայնագրել
5. Կառավարել դիտումը (ետ, առաջ, դադար)
6. Տեսադարան
7. Շարժվել ինտերֆեյսով (աջ, ձախ, վերև, ներքև), հաստատել ընտրությունը (OK)
8. Վերադառնալ
9. Բացել գլխավոր մենյուն
10. Կառավարել ձայնը, դիտել հաղորդումների ցանկը, թերթել ալիքները
11. Թվերի և տառերի մուտքագրում
12. Վերադառնալ նախորդ ալիքի դիտմանը
13. Հեռացնել մուտքագրված տառը / թիվը

## Հեռակառավարման վահանակ

*Ինչպե՞ս ձայնագրել հեռուստացույցի վահանակի հիմնական կոճակների ֆունկցիաները **iAN TV Box** սարքի ունիվերսալ վահանակի վրա:*

**iAN TV Box** սարքի ունիվերսալ վահանակի միջոցով կարելի է կառավարել նաև հեռուստացույցը: Դրա համար անհրաժեշտ է պարզապես հեռուստացույցի վահանակի հիմնական կոճակների ֆունկցիաները ձայնագրել սարքի ունիվերսալ վահանակի վրա:

Գործողությունը պարզ է և արագ:

**ՔԱՅԼ 1.** Երկար սեղմել **iAN TV Box** սարքի հեռակառավարման վահանակի **SET** կոճակի վրա՝ մինչ սարքի անջատման / միացման կոճակը ստանա կարմիր լուսային գունավորում:

**ՔԱՅԼ 2.** Հեռուստացույցի և սարքի վահանակները պահել դեմ դիմաց: Նախ սեղմել սարքի վահանակի անջատման / միացման կոճակը և ապա սեղմել ու պահել համապատասխան կոճակը հեռուստացույցի վահանակի վրա՝ մինչև լուսային ազդանշանի մարումը (նույն գործողությունը կրկնել նաև վիդեո -մուտքի / ձայնի կառավարման կոճակների համար):

**Քայլ 3.** Հեռուստացույցի վահանակի առանձին կոճակների ֆունկցիաները **iAN TV Box** սարքի վահանակի վրա ձայնագրելուց հետո կարող եք հեռուստացույցը կառավարել **iAN TV Box** սարքի հեռակառավարման վահանակի միջոցով:

# Ինտերակտիվ հնարավորություններ

## Electronic Program Guide

Հաղորդումների ծրագրում կարող եք տեղեկանալ՝ որ ժամին ինչ է ցուցադրվում

## Live TV Restart

Դուք կարող եք կառավարել ուղիղ եթերը և վերսկսել հաղորդման դիտումը սկզբից

## Live TV Recording

Ձայնագրեք նախընտրած հաղորդումը և դիտեք այն ավելի ուշ՝ երբ Ձեզ հարմար է

## Parental Control

Հաղորդումների համար կարող եք կիրառել տարիքային սահմանափակում

## Live TV Catch-Up

Դիտեք վերջին 48 ժամվա ընթացքում ցուցադրված ցանկացած հաղորդում

## Time Shift TV

Անկախ նրանից, թե որ երկրում եք ապրում՝ ժամային տարբերությունը խնդիր չէ

## Video Library

Օգտվեք հայկական ֆիլմերի և մուլտֆիլմերի հարուստ տեսադարանից

## Follow Me

Փոխանցեք հաղորդման դիտումը Ձեր մոբայլ սարքից հեռուստացույցին և հակառակը



*Մաղթում ենք Ձեզ հաճելի դիտում*

[www.iantv.tv](http://www.iantv.tv)  
[support@iantv.tv](mailto:support@iantv.tv)  
+31266690012